



Նախնական ծանուցում՝ միջանկյալ դպրոցի Անգլերեն սովորողների ուսումնական ծրագրում ընդգրկման և տեղավորման մասին (Դաշնային Title I և պետական պահանջներ)

Դպրոց _____

_____ -ի ծնողին(ներին)/խնամակալին(ներին) Ամսաթիվ _____

Աշակերտի ID _____ Ծնվ. _____ Դասարան _____ Մայրենի լեզու _____

Հարգելի ծնող(ներ)/խնամակալ(ներ), Երբ ձեր երեխան ներգրավեց մեր դպրոցում, իր «Տան լեզվի հարցման» մեջ նշվեց մի այլ լեզու (ոչ անգլերեն): Օրենքը պահանջում է, որ մենք գնահատենք ձեր երեխային և ծանուցենք ձեզ երեխայի անգլերեն լեզվի մակարդակի մասին: Մենք պարտավոր ենք ձեզ տեղեկացնել լեզվի ուսումնասիրության ծրագրի տարբերակների մասին, որոնցից կարող էք ընտրել այն, որը լավագույնս համապատասխանում է ձեր երեխային:

Լուս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը գնահատում է այն լեզուներ և մշակույթները, որոնք Անգլերեն սովորողները (EL-ները) բերում են իրենց հետ կրթօջախ: ԼԱՄԴՇ-ը տարբեր լեզվական ուսումնական ծրագրեր է տրամադրում EL-ների համար, որպեսզի նրանք հասնեն ակադեմիական առարկաների և անգլերենի տիրապետմանը, և օգտագործում է լեզուն և մշակութային արժեքները, որոնք EL-ները ուսումնասիրում են՝ տարբեր լեզուների իմացությունը զարգացնելու համար: Որպես ԼԱՄԴՇ-ի ծնող, դուք ունեք հնարավորություն ընտրելու ցանկացած լեզվական ուսումնական ծրագիր, որը լավագույնս կհամապատասխանի ձեր երեխայի լեզվական և ակադեմիական կարիքներին: Խնդրում ենք ընտրել հետևյալ ծրագրերից մեկը:

Ուսումնական ծրագրեր Անգլերեն սովորողների համար տարրական դպրոցներում						
Ուսումնական ծրագիր (ընտրել մեկը)	<input type="checkbox"/> Երկլեզու երկկողմանի խորասուզված ծրագիր (K-12)	<input type="checkbox"/> Երկլեզու միակողմանի խորասուզված ծրագիր (K-12)	<input type="checkbox"/> Լրացուցիչ ծրագիր EL-ների սկսնակների համար (6-12)	<input type="checkbox"/> Արագացված ուսումնական ծրագիր երկարաժամկետ ուսուցում ստացած EL-ների համար (6-12)	<input type="checkbox"/> Լեզու և գրագիտություն անգլերենի արագացման ծրագրում (K-12)	<input type="checkbox"/> Անգլերեն լեզվի հիմնական ծրագիր (K-12)
Ո՞ւմ համար է նախատեսված ծրագիրը:	Ծրագիր Անգլերեն սովորողների, Միայն անգլերեն սովորողների և Անգլերեն տիրապետող աշակերտների համար, որտեղ բովանդակության դասավանդումը տրամադրվում է երկու լեզուներով՝ անգլերեն և այլ լեզվով	Ծրագիր Անգլերեն սովորողների համար, որտեղ բովանդակության դասավանդումը տրամադրվում է երկու լեզուներով՝ անգլերեն և EL-ների մայրենի լեզվով	Ծրագիր EL-ների համար, ովքեր հաճախում են ամերիկյան դպրոցներ երկու տարուց քիչ և ետք են սկսում անգլերեն սովորել:	Ծրագիր EL-ների համար, ովքեր 5 կամ ավելի տարի հանդիսանում են EL-ներ և դեռ չեն վերադասակարգվել:	Ծրագիր Անգլերեն սովորողների համար, ովքեր սկսում են սովորել անգլերենը (ELPAC -ի 1-3 մակարդակներ նվազագույնը): Ամբողջ դասավանդումը տրամադրվում է անգլերեն լեզվով մայրենի լեզվի օգտագործմամբ անհրաժեշտության դեպքում:	Ծրագիր Միայն անգլերեն սովորողների, Անգլերեն տիրապետող աշակերտների և անգլերեն տիրապետող Անգլերեն սովորողների համար է:
Ի՞նչ ուսումնական ծառայություններ են տրամադրվում:	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում անգլերենով և այլ լեզվով (օր.՝ իսպաներեն, կորեերեն, մանդարին) Նպատակային լեզվի զարգացում Անգլերեն լեզվի զարգացում	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում անգլերենով և մայրենի լեզվով Անգլերեն լեզվի զարգացում	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում մայրենի լեզվի օգնությամբ կամ մայրենի լեզվով Անգլերեն լեզվի զարգացում	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում տարբերակված ուսումնական աջակցությամբ Աշակերտները ստանում են արագացված անգլերեն լեզվի գրագիտության դասավանդում, որի նպատակն է օգնել նրանց վերադասակարգվել	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում անգլերենով՝ հատուկ մեթոդների կիրառմամբ Դասավանդում մայրենի լեզվի օգնությամբ, անհրաժեշտության դեպքում Անգլերեն լեզվի զարգացում	Տվյալ դասարանի բովանդակության դասավանդում անգլերենով Անգլերեն սովորողները շարունակում են ստանալ Անգլերեն լեզվի զարգացում մինչ վերադասակարգումը
Ո՞րն է ուսումնական ծրագրի նպատակը:	Ձեռք բերել երկլեզու կրթություն և ակադեմիական իմացություն	Ձեռք բերել ակադեմիական իմացություն երկու լեզուներով և երկլեզու կրթություն	Ձեռք բերել երկլեզու կրթություն և ակադեմիական իմացություն	Ձեռք բերել երկլեզու կրթություն և ակադեմիական իմացություն	Ձեռք բերել ակադեմիական առարկաների և անգլերենի տիրապետում	Ձեռք բերել ակադեմիական առարկաների և անգլերենի տիրապետում

Նշեք, եթե կիրառելի է. **Անհատական կրթական ծրագիրը (IEP) կցված է գործերին**

